տոնական ուսմունքի թե՛ տեսականապես, թե՛ գործնականապես ձևավորման համար և մյուս կողմից դյուրացրել է այդ նոր ուսմունքի ընդունելությունը նաև Հայկական լեռնաշխարհում։ Այդ տոները շատ ավելի հին էին, քան թե ճնդեվրոպական էքնիկ տարրի հաստատվելն ուրարտական ներքնաշերտի վրա։ Պետք է բավականաչափ հիմնավորված համարել այն ենթադրությունը, որ Վարդ աստվածը ժառանգված է ուրարտական աշխարհից և համապատասխանում է Ուրարտուի Ard՝ Արդինիս աստվածության ուրարտական երրորդության՝ Խալդ և Տէյշեբա աստվածներին կից երրորդ անդամին։ Ատտիս և Կիբէլայի առասպելի մի անդրադարձում ուրարտական աշխարհի մեջ պահպանված՝ կարելի է համարել նաև այն ծառի պատկերը, որը գծված է Վանա պեղումների միջից հանած մի կնիքի վրա, որը Բ. Բ. Պիոտրովսկին[56], հետևելով Պֆեֆերին, բացատրում է որպես կառքով տեղափոխվող ծառի նկար։ Ծառի այս եղանակով փոխադրումը, ինչպես հայտնի է, տեղի էր ունենում Ատտիս–Կիբէլային նվիրված տոնակատարությունների ժամանակ։ Այդ առասպելի մի մանրամասնությունն ևս կարելի է նշել Զանգեզուրում պահպանված մի ավանդության մեջ։ Ասում են, թե Ծիծեռնավանքի անունը առաջ է եկել ծիծեռնը՝ ճկույթ-մատ անունից, որովհետև իբր թե այդտեղ է ամփոփված Պետրոս Առաքյալի ճկույթ մատը[57]։ Սակայն ճկույթի այս պաշտամունքը պետք է կապել ոչ թե Պետրոս Առաքյալի, այլ Ատտիսի հետ, որի մասին առասպելը պատմում է, որ երբ նա անձնասպանություն գործեց, Կիբէլան Զևսին աղերսում էր, որ նրա մարմինը անապակ մնա։ Կիբէլայի այդ աղերսանքը կատարվում է։ Ատտիսի մարմինը չի հյուծվում և չի նեխվում, սակայն միայն նրա մազերն են, որ շարունակում են երկարել, և ճկույթն է, որ երբեմն շարժվում է։ Ահա այդ Ատտիսյան ճկույթի պաշտամունքն է, որ պահպանվում էր փոյուգիական աշխարհից շատ հեռու, արևելքում՝ Զանգեզուրում։ Առհասարակ աչքի է ընկնում այն երևույթը, որ Զանգեզուրում, որն աշխարհագրական տեղադրությամբ մոտիկ է Իրանին, իրանական կրոնական աշխարհայացքի անդրադարձումը տեղական հավատալիքների վրա ավելի ցայտուն չի նշմարվում և ուժեղ կերպով, քան թե ավելի արևմուտք տարածված հայաբնակ գավառներում է եղել և այստեղ էլ փոքրասիական հնագույն մտածողությունը ըստ ամենայնի մնում է ամուր, ուժեղ ու անխախտ։

ԼԵՌՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ժողովրդական տոներից մեկը, որն առանձնապես խոշոր չափերով պահպանել էր իր մեջ նախնական մտածողության բնորոշ սովորությունները, Վարդավառի տոնը նվիրված էր լեռների գագաթների պաշտամունքին։ Այս տոնը տարբեր մանրամասնություններով կատարվում էր բոլոր հայաբնակ գավառներում, սկսած Ղարաբաղ-Զանգեզուրից մինչև Փոքր Ասիայի հայկական

---

[56] *Б. Б. Пиотровский*, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 278։

[57] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 48։ Վանքը գտնվում է Գորիսից հյուսիս մի քսան կմ հեռավորության վրա, խնածախ գյուղից ոչ հեռու։ Ուխտը համբարձման և ս. Խաչի օրն է։ Մեծ ուխտատեղի էր ոչ միայն հայերի, այլև մահմեդականների համար։ Սասունում, Լիսանք գավառակի սահմանի մեջ, Մարթուկ սարի վրա կառուցված Գոմուց վանքը կոչվում է նաև Ոսկե ճկուտ վանք կամ Մատէն առագյալի վանք. ասում են, թե այդտեղ է դրված Հռոմից բերած Պետրոս Առաքյալի ճկույթը։